

Տոնական օր Էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական
գրադարանում

Փետրվարի 19-ին՝ Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ Էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարանում տոն էր: Օրվա խորհրդին համահունչ՝ Հայաստանի ազգային գրադարանը, ի թիվս այլ նվիրատուների, Հովհաննես Հովհաննիսյանի անվան գրադարանին նվիրաբերեց պետական պատվերով և աջակցությամբ հրատարակված 1004 միավոր նոր հրատարակություններ՝ գեղարվեստական, պատմական, գիտահանրամատչելի և մանկական գրականություն: Այն նպատակ ունի համալրել Էջմիածնի քաղաքային գրադարանները և ընթերցասեր հասարակությանը իրազեկել նոր հրատարակված գրականությանը: Նվիրաբերված գրականության ցանկում էր նաև BELLIN-ի հովանավորությամբ և Գաֆեսճյան արվեստի կենտրոնի կողմից հրատարակված Հովհաննես Թումանյանի «Ստեղծագործությունների ընտրանի» գրքից և Հայաստանում Չինաստանի դեսպանատան հովանավորությամբ հրատարակված «Չինական ժամանակակից պատմվածքներ»-ից օրինակներ: Մեծաքանակ գրականություն նվիրաբերեց նաև Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանը:

Գրադարանում նշվում էր նաև Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի 150-ամյա հոբելյանները: «Թումանյանի աշխարհը՝ կոմիտասյան ղողանջներով» գրական ցերեկույթի պատվավոր հյուրերն էին Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանը, ավագանու անդամները, Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը և աշխատակազմը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե Թամար Մանուկյան» Մատենադարանի տնօրեն Տեր Արարատ քահանա Պողոսյանը և հարգարժան հյուրեր:

